«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 Նոյեմբերի 2023, N 5 - 1

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով **«2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնական բաժինը, դեկանատները և ամբիոնները պատշաճ աշխատանք են կատարել երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը և քննաշրջանը կազմակերպելու ուղղությամբ: Կիսամյակի ընթացքում ուսումնառված դասընթացների յուրացման աստիճանը ստուգելու նպատակով ուսանողների գիտելիքի ստուգումները կազմակերպվել են գործող կարգի պահանջներին համապատասխան՝ ըստ ուսումնական պլաններում դասընթացների գիտելիքի ստուգման մատնանշված եղանակների: Ուսանողների ընթացիկ ակտիվությունը և բացակայությունները հաշվառվել են UMS համակարգում, ուսումնառության նյութերի տրամադրման համար Moodle հարթակում ձևավորված 2208 մոդուլներից, գործող ձևաչափին համապատասխան, փետրվարի 16-ի դրությամբ պատշաճ լրացված են եղել 98%-ը: Քննագրաֆիկների խախտման դեպքեր չեն արձանագրվել:

2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին (առանց 1-ին և 2-րդ վերահանձնումների) մասնակցել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա կրթաձևերի **4912** ուսանողներ, որոնք բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի առաջին կիսամյակում ներառված **586** դասընթացների գծով (այդ թվում 394-ը՝ քննությամբ ավարտվող, 192-ը՝ ստուգարքով ավարտվող) մասնակցել են **37557** գիտելիքի ստուգման: **Ուսման առաջադիմությունը կազմել է 66%**: Առաջադիմությունը զգալի բարձր է առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայում և առկա ուսուցման բակալավրիատում, էապես ցածր է հեռակա ուսուցման բակալավրիատում:

1671 ուսանող (բոլոր ուսանողների 34%-ը) մեկ կամ ավելի դասընթացից ունեցել է վերահանձնում: Ընդհանուր առմամբ, 1671 ուսանողներ միասին վերցրած ունեցել են **4268** վերահանձնում: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **927** ուսանող (բոլոր ուսանողների 18,8%-ը), որոնք միասին վերցրած ունեցել են **2327** վերահանձնում: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **230** ուսանող (բոլոր ուսանողների 4,6%-ը), որոնք միասին վերցրած մասնակցել են 308 վերահանձնման: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **127** ուսանող (բոլոր ուսանողների 2,5%-ը), որոնք միասին վերցրած մասնակցել են 150 վերահանձնման: **44** ուսանող 51 քննության 2-րդ վերահանձնումը տեղափոխել է այլ կիսամյակ: **180** ուսանող (բոլոր ուսանողների 3,7%-ը) քննաշրջանի արդյունքներով հեռացվել է համալսարանից: Ըստ կրթական ծրագրերի և կրթաձևերի՝ քննաշրջանի ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.

1. Առկա ուսուցման բակալավրիատի 1-3-րդ կուրսերի **2823** ուսանող մասնակցել է **24205** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **750**-ը: Առաջադիմությունը կազմել է **73.4%** նախորդ կիսամյակի **76%-ի** համեմատ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **420** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **180** ուսանող, 2-րդ վերահանձնմանը՝ **104** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումը այլ կիսամյակ է տեղափոխել **21** ուսանող: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվել է **119** ուսանող:

2. Հեռակա ուսուցման բակալավրիատի 1-4-րդ կուրսերի **1777** ուսանող մասնակցել է **11244** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **867**-ը: Առաջադիմությունը կազմել է **51,2%** նախորդ կիսամյակի **59%-ի** համեմատ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **482** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի 1-ին վերահանձնմանը մասնակցել է **50** ուսանող, 2-րդ վերահանձնմանը՝ **22** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումը այլ կիսամյակ է տեղափոխել **23** ուսանող: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվել է **58** ուսանող:

3. Առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսի **256** ուսանող մասնակցել է **1886** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **45**-ը: Առաջադիմությունը կազմել է **82,4%** նախորդ կիսամյակի **79%-ի** համեմատ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **24** ուսանող: Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր վերահանձնած

ուսանողներ չեն եղել: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվել է **3** ուսանող:

4. Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի **56** ուսանող մասնակցել է **222** գիտելիքի ստուգման: Նրանցից անբավարար գնահատականներ են ստացել **9**-ը: Առաջադիմությունը կազմել է **83,9%** նախորդ կիսամյակի **73%-ի** համեմատ: 2-րդ վերահանձնմանը մասնակցել է **1** ուսանող: Քննաշրջանի արդյունքներով համալսարանից հեռացվող ուսանող չի եղել:

Առկա ուսուցման բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է **73.4%**: Այն շարունակել է նվազել վերջին տարիների նույն ցուցանիշի համեմատությամբ (2022-2023 1-ին կիսամյակ՝ 76%, 2021-2022՝ 78%, 2020-2021՝ 83,5%, 2019-2020՝ 84,7%, 2018-2019՝ 86,9%), ինչը հիմնականում պայմանավորվել է գնահատման գործընթացի նկատմամբ սահմանված հավելյալ *վերահսկողությամբ: Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման* առաջադիմությունը կազմել է 51,2% (2022-2023 1-ին կիսամյակ՝ 59%, 2021-2022՝ 58,1%):

Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը կազմել է 82,4% (2022-2023 1-ին կիսամյակ՝ 79%, 2021-2022՝ 84,8%), հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 83,9% (2022-2023 1-ին կիսամյակ՝ 73%, 2021-2022՝ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակ՝ 91,1%):

Նախորդ կիսամյակի քննաշրջանի համեմատությամբ ուսման առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատում նվազել է 2,6%-ով, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 7,8%-ով, առկա ուսուցման մագիստրատուրայում աճել է 3,4%-ով, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 10,9%-ով:

Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում **24205** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **1764** բացասական գնահատական (7%), **16232** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (67%), **2344** գնահատական՝ 14,01-17,0 միջակայքում (10%) և **3865** գնահատական՝ 17,01-20,0 միջակայքում (16%): Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում «գերազանց» և «լավ» առաջադիմությամբ ուսանողների տեսակարար կշիռները նախորդ կիսամյակի համեմատությամբ աճել են:

Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում **11244** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **2330** բացասական գնահատական (21%), **6288** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (56%), **1251** գնահատական՝ 14,01-17,0 միջակայքում (11%) և **1375** գնահատական՝ 17,01-20,0 միջակայքում (12%): Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում «գերազանց» և «լավ»

առաջադիմությամբ ուսանողների տեսակարար կշիռները նախորդ կիսամյակի համեմատությամբ մնացել են անփոփոխ:

Առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում **1886** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **161** բացասական գնահատական (9%), **385** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (20%), **203** գնահատական՝ 14,01-17,0 միջակայքում (11%) և **1137** գնահատական՝ 17,01-20,0 միջակայքում (60%): Առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում «գերազանց» և «լավ» առաջադիմությամբ ուսանողների տեսակարար կշիռները նախորդ կիսամյակի համեմատությամբ աճել են:

Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում **222** գիտելիքի ստուգման արդյունքում արձանագրվել է **5** բացասական գնահատական (6%), **105** գնահատական եղել է 8,0-14,0 միջակայքում (47%), **37** գնահատական՝ 14,01-17,0 միջակայքում (17%) և **67** գնահատական՝ 17,01-20,0 միջակայքում (30%): Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում «գերազանց» և «լավ» առաջադիմությամբ ուսանողների տեսակարար կշիռները նախորդ կիսամյակի համեմատությամբ աճել են:

Համակարգչային և բանավոր քննություններից ամփոփիչ քննությունների փուլում **8,0-14,0** միջակայքում գնահատականների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 34% և 66%, **14,1-17,0** միջակայքում՝ 40% և 60%, **17,1-20,0** միջակայքում՝ 14% և 86%, **անբավարար գնահատականի** միջակայքում՝ 44% և 56%, **2-րդ վերահանձնման փուլում**՝ 56% և 44%, իսկ **առավելագույնը 12-րդ կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնման 2 փուլերում**՝ 83% և 7%:

Ըստ ֆակուլտետների ուսման առաջադիմությունը միջին բուհականից (66%) զգալի բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (74,6%) ֆակուլտետում, բարձր է ֆինանսական (68,8%) ֆակուլտետում, մոտ է միջինին հաշվապահական հաշվառման և աուդիտի (67%) ֆակուլտետում, ցածր է կառավարման (61,9%) ֆակուլտետում, էապես ցածր է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (59%) և ինֆորմատիկայի և վիճակագրության (63%) ֆակուլտետներում:

Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում առաջադիմությունը միջին բուհականից (73,4%) բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (78,4%), ֆինանսական (78%) և հաշվապահական հաշվառման և աուդիտի (76,9%) ֆակուլտետներում, մոտ է միջինին կառավարման (74,6%) ֆակուլտետում, միջինից էապես ցածր է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական

հարաբերությունների (65,7%) և ինֆորմատիկայի և վիճակագրության (61,8%) ֆակուլտետներում:

Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում առաջադիմությունը միջին բուհականից (51,2%) զգալի բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (66,1%), ֆինանսական (59,3%) և ինֆորմատիկայի և վիճակագրության (57,1%) ֆակուլտետներում, ցածր է հաշվապահական հաշվառման և աուդիտի (46,2%) ֆակուլտետում, էապես ցածր է կառավարման (46,2%) և տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (35,7%) ֆակուլտետներում:

Առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում առաջադիմությունը միջին բուհականից (82,4%) զգալի բարձր է հաշվապահական հաշվառման և աուդիտի (92,7%) ֆակուլտետում, բարձր է ինֆորմատիկայի և վիճակագրության (86,7%) ֆակուլտետում, մոտ է միջինին ֆինանսական (83,7%) և տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (83,7%) ֆակուլտետներում, իսկ միջինից ցածր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (76,9%) և կառավարման (76,8%) ֆակուլտետներում:

Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերում առաջադիմությունը միջին բուհականից (83,4%) զգալի բարձր է մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման (100%) ֆակուլտետում, բարձր է տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների (85,7%) ֆակուլտետում, ցածր է հաշվապահական հաշվառման և աուդիտի (79,3%) և ֆինանսական (80%) ֆակուլտետներում:

Արձանագրելով կատարված աշխատանքները՝ գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է, որ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Թեպետ ուսանողների գնահատումը բարելավվել և ավելի արժանահավատ է դարձել, իսկ բանավոր քննությունների արդյունքները բացասական և միջին գնահատականների միջակայքում և 2-րդ վերահանձնման փուլում էապես մոտեցել են համակարգչային քննությունների արդյունքներին, սակայն գնահատման անաչառությունը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար՝ հատկապես 17,01-20,0 միավորի միջակայքում, ինչպես նաև առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումների փուլում:
2. Հոսքային առարկաների գծով միևնույն դասընթացի դասախոսների գնահատման քաղաքականությունը շարունակում է որոշակիորեն շեղված մնալ տնտեսագիտության տեսության, բարձրագույն

մաթեմատիկայի, ֆինանսների, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոններում, որտեղ դասախոսների գնահատականները միմյանցից տարբերվում են 1,5-2,5 միավորով:

3. Միջին առաջադիմության ցուցանիշից տարբեր ֆակուլտետների արդյունքները՝ հատկապես մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի, ըստ կրթաձևերի և կրթական ծրագրերի, շարունակում են զգալիորեն միմյանցից շեղված մնալ:
4. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում համակարգչային ստուգմանը ուսանողների մասնակցությունը մտահոգիչ ցածր մակարդակի վրա է, ինչն էական բացասական ազդեցություն ունի առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերում առաջադիմության ցուցանիշի կրճատման համատեքստում:
5. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի միջին առաջադիմության ցուցանիշը շարունակում է մնալ մտահոգիչ ցածր և դրսևորում է անկման միտում:
6. Ընդհանուր առմամբ, թեպետ «գերազանց» և «լավ» գնահատականներով քննաշրջանն ամփոփող ուսանողների տեսակարար կշիռներն ավելացել են, սակայն այս ուսանողների թվում համակարգչային քննություններից նման արդյունքի զգալի ցածր տեսակարար կշիռը շարունակում է մնալ մտահոգիչ:
7. Քննաշրջանի արդյունքներով ուսանողների հեռացումների մեջ առկա կրթաձևի տեսակարար կշիռը շարունակում է բարձր մնալ, քան հեռակայինը:
8. Ընդհանուր առմամբ, առաջադիմության ցուցանիշի դինամիկան շարունակում է մտահոգիչ մնալ հատկապես բուհի զարգացման ռազմավարության նպատակային թիրախի ապահովման համատեքստում:

Ելնելով վերոգրյալից՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**
   1) արձանագրված թերությունների վերացման համար մշակել որոշակի միջոցառումներ՝ նշելով պատասխանատուներին:

2. **Հանձնարարել դեկաններին՝**

1) շարունակել դասաձախողումների մշտադիտարկումները, դրանց դեպքերը քննարկել ֆակուլտետների գիտական խորհուրդների և ամբիոնների նիստերում՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա.
2) շարունակել վերահսկողությունը հատկապես հեռակա կրթաձևում ուսանողների հաճախումների նկատմամբ, բացակայող և ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ կատարել բացատրական աշխատանքներ.
3) ֆակուլտետի ամբիոններում ներգրավված ակադեմիական կազմի կողմից ուսանողների գիտելիքի ստուգմամբ արձանագրած գնահատականների, վերահանձնումների, հեռացումների միջին վիճակագրական ցուցանիշներից շեղում ունեցող դեպքերը դարձնել ֆակուլտետների գիտական խորհուրդների քննարկման առարկա.
4) խիստ հսկողություն սահմանել էլեկտրոնային մատյանների լրացման նկատմամբ.
5) մեծացնել ֆակուլտետի վերահսկողությունը հատկապես ակտիվության բաղադրիչի գնահատման և բանավոր քննությունների վերահանձնումների նկատմամբ:

3. **Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝**

1) հաճախակիացնել դասալսումները միջին ցուցանիշից շեղված գնահատման քաղաքականություն ունեցող դասախոսների գնահատման պրակտիկայի նկատմամբ.
2) խիստ վերահսկողություն սահմանել Moodle հարթակ վերբեռնվող նյութերի բովանդակության նկատմամբ.
3) մեծացնել ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ արտալսարանային աշխատանքի ծավալները՝ հսկողություն սահմանելով դասախոսների արտալսարանային աշխատանքի պատշաճ ծավալով կատարման նկատմամբ.
4) ակտիվացնել կուրսղեկների ինստիտուտը հատկապես բակալավրիատի 1-ին կուրսերում.
5) բացառել առանց հանձնաժողովների բանավոր քննությունների անցկացման դեպքերը, իսկ հանձնաժողովների կազմը նախքան քննաշրջանի մեկնարկը տրամադրել դեկանատներին.

6) ամբիոններում քննարկել քննությունների ձևաչափի փոփոխության հարցը և ներկայացնել առաջարկություններ ուսանողների գիտելիքի բանավոր ստուգման նոր ձևաչափերի վերաբերյալ:

4. **Սույն որոշումը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. նոյեմբեր 30
Երևան